



ՔԱՐՈԶ

«Եկ կեր ուրախութեամբ զիաց քո, և արք սրտիւ պուարձացերով զգինի քո. զի արդէն խոհ Խաճեցաւ Աստուած ի գործս քո» (Ժող. Թ 7):

«Եկ, կեր ուրախությամբ քո հացը և խմիր պիարձայի սրտով քո զինին, որովհետև Աստիւած արդէն խոհ հավանություն տվեց քո գործերին»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, գրեթե հինգ և կես դար էր անհրաժեշտ, որպեսզի հայ ժողովորդի համար կրկին հնչեր աստվածաշնչական բաղդալի այս ավետիսը:

Կիլիկյան թագավորության անկումից մինչև 1920 թ. նոյեմբեր 29-ի լույս առավոտը հայ ժողովորդին վիճակված էր անցնել դառն փորձությունների, կենաց և մահու մաքառումների և հերոսացման մի նոր շրջան:

Հաճախ հայ կյանքում այսպես է եղել: Երբ Արծիվն հայոց, հայոթահարելով իր վրա ճնշող օտար ուժերը, թևերը տարածած ձգտել է հառնել և վեր բարձրանալ, ճիշտ այդ պահին հենց «հարլաս» կոչված թշնամունետը խոցել է նրան:

Խաներ ու շահեր, սուլթաններ, բեգեր ու երիտուրքեր մեկը միուսից վայրագ, մեկը միուսից անարդ, արևախում, մահասփյուռ խորշակի նման անցել են հայոց երկրով՝ իրենց սմբակների տակ թողնելով մահ ու ավեր, գաղթ ու հալածանք:

Ու մռայլվել է երկինքն հայոց աշխարհի: Սև ու մութ ամաբերից հեղեղի նման թափվել են կրակ ու արյուն, ողբ ու աղաղակ, արցունք, հառաջանք:

Հայոց քարն ու գիրը, ոգին ու Եկեղեցին անցան հնոցով դաժան:

Բայց հայը գիտեր պատմության դասից, որ կարելի է ապրել մեռնելով, բայց ոչ մահանալ, տիգախոց վերքից արյան փոխարեն կյանքի սեր հորդել, արևաքամ մարտնում կրել հոգի վեհ և անխոցելի, որ ապրի հավերժ ոգին հայ կյանքի: Ով ականչ ունի, բյակ հավատու հայոց պատմության, նա կիաստատի մտքով անվարան, որ Եկեղեցին է եղել հայկապան ապգի անմեռ այդ ոգին: Եվ ո՞վ կուրանա, որ եղել է նա ծնող մի բարի, սրբություն սրբոց ամեն մի հայի, անառիկ ամրոց: Այո, նա եղել է, և հավերժ կմնա զգաստությանց մայր, որ զարդարում է իր զավակների կյանքի ուղին անմահության անանց փառքով:

Եվ քառուղիներում փորձությունների, զգաստ հավատքի հայացքն իր ուղղած հեռվում առկայծող փրկության լույսին՝ հայը ճանաչեց խորհուրդք ու ուղին իր լինելության: Ու հայ մայր, պարզենեց ապգին խորագետ դեսպան Նարայել Օրի, իր ժողովրդի տառապանքներից ինսատնացած լուսամիտ հայրապետ Սիմեոն Երևանցի, Վեհախրիստ Չուղայեցի Հակոբ կաթողիկոս, Մեսրոպ Թաղաղյան՝ ուղեցույց անձեր հայոց փրկության: Աղավնիներն այդ ավետաբեր իշան

աշխարհի Եվրոպա կոչված խորթ տանիքներին, սակայն չունեցան ոչ ոք ունկնդիր և ոչ մի տեղից տուն չբերեցին ճուղը ձիթենյաց: Բայց դեգերումներն այդ բացահայտեցին ու հաստատեցին, որ կա փրկություն հայոց աշխարհի ու այն պիտի գա հյուսիսից սփռվող լույսի թևերով:

Բայց ավատ, սիրելի հայորդիներ, հեռու էր դեռ ժամը փրկության:

1915 թվականն Երիտրուքերը պատմության բեմ եղան սոված գալերի իրենց ոհմակով: <Նշումնեց ժողովուրդն հայոց: Մեկ ու կես միջին ձայների հառաջ մնաց օդում կախ, որ պիտի հնչեր, ուժգին թափով վրեժի կոչեր, Սարդարապատում հրաշգրդեր, հայ վիճուրների շորթերին անմեռ դառնար վասն ապատության և արդարության քայլերգ հայթական: Եվ ո՞վ է լսել երբեմ, որ խավարը կովի լույսի դեմ և հաղթի նրան, որքան էլ լույսն այդ լինի բուլ, նվադ:

Սարդարապատով, Ղարաբիլիսայով ու Բազ Ապարանով ձեռք բերված երկամյա անկախությունը վերստին վտանգվեց 1920 թ. Ալեքսանդրապոլի դաշնագրով, որը ոչ այլ ինչ էր, քան մահագիր: Բայց, բյուր փառք ամենակապ Աստծուն, որ այն չդարձավ հայի բնաշնչաման վավերագիր: Օգնության հասած ուսւ ժողովրդի հայթական բազուկը պատուեց ամոթափ դաշնագիրն այդ, դադարեցրեց արյան հոսքը Սարդարապատի և շեփորեց բերկրալի ավետիսը աստվածաշնչական. «Եկ, կեր ուրախությամբ քո հացը և խմիր վկարձալի սրտով քո գինին, որովհետև Աստված արդեն իսկ հավանություն տվեց քո գործերին»:

Ու երկարաձիգ դարերի կուսական երկունքով ծնեց ժողովուրդն հայոց հրաշք մի մանուկ՝ երկիր Հայաստան, որի ստեղծագործ մեկ օրը համարժեք պիտի դառնար նրա ապրած մեկ տարվան, նվաճումների տարին՝ ողջ դարի:

Հայոց պատմության նորաբաց գրքի առաջին էջում ոսկե տառերով արձանագրվեց նոյեմբեր 29-ը՝ իրեն ապօպային վերածնողի նվիրական մեծ օր: Նոյեմբերով փոխվեց մեր ժողովրդի մարտնչումների երանգն ու ուղին:

Ընդամենը վեց և կես տասնամյակ, պատմության դարամատյանից վերցված չնչին մի հատված: Բայց պիտի հասցներ հայ ժողովուրդը հրաշքներ գործել, իրենցից խլվածը կոկին ետ բերել, ավերակների և մոխիրների տակ հևացող կալծից նոր, հոգոր կյանքի իր շահը վառել: Եվ հայենիքը մեր նորածին, ծաղկեց, ծիրանի հագակ ու գեղեցկացակ իր հրաշագեղ, լույս երևանով, սուրբ

տաճար դարձած Մատենադարանով, աստղերի հետ խոսող մեր հյուրականով, տաղանդներ կերտող ակադեմիայով, համալրանով: Դարերի բովու կուտակված արժեքները մեր, կյանքի ակնթարթ տևողության մեջ, իրենց անկուգական կատարելությամբ և ամբողջականությամբ մարմին առան նորոյց Հայաստանի հանձնարեղ զավակների մեջ. Սևակով՝ գրականություն, Սարյանով՝ Նկարչություն, Խաչատրյանով՝ Երաժշտություն, Թամանյանով՝ Ճարտարապետություն, և ի գույք այս ամենի Հայոց Հայրապետով՝ Կենարար հավատք և ազգասեր ողի:

Խորիրդային ժողովուրդների անխախտ բարեկամությամբ զորացած ազգս հայոց. քայլեց գիտության ու տեխնիկայի, տնտեսության, մշակույթի նորաբաց պողոտաներով և դարձավ «հույսի և լույսի» հոգոր հայրենիք՝ խրոխտ, անվեհեր:

Ս ի ա հ ա ն ա է շ ի ն կ ա ր ո ւ յ ա յ ը կ ա մ ա ր ն ե ր ի տ ա կ Հ ա յ ա ս տ ա ն յ ա յ ը Ե կ ե ն ե ց ի ն և հ ո տ ո ւ ն հ ա յ ո ց ա ր ք ա պ ա ն ա յ ս պ ա հ ի ն ս բ ա յ ի հ ա վ ա տ ա յ ա յ ա լ ն ե ր ի պ ա ն գ ե ր ի վ ա ր յ թ զ ո ղ ա ն չ ո վ լ և ի խ ո ր ո ց ս ր տ ի ո ղ ջ ո ւ ն ո ւ մ է ն ո յ ե մ բ ե ր յ ա ն կ ե ն ս ա խ ի ն դ ա ր չ ա լ ո ւ յ ա ս ը Հ ի ր ա վ ի ի հ ն չ պ ե ս ս ա ն ձ ե լ ո ւ ր ա յ ո ւ թ յ ո ւ ն ը մ ե ր հ ա վ ա ր տ ա յ ի թ ե ր ի տ ա ր յ ե ր մ ա ս ե ր ո ւ մ ։ Մ ե ն ք վ ա տ ա հ ե ն ք ո ւ ն է բ ա շ խ ո ւ մ ի ր վ ա վ ա կ ն ե ր ի ն ս ո ւ մ ի ր հ ա յ ո ւ յ ա ս տ ա ն և ի ս պ ի ո ւ ո ւ մ ա շ խ ա ր ի ի ։

Այօր, սիրելի հավատացյաներ, վերածնված հայրենիքի անխառն ուրախությունն է ապրում նաև սփյուռքի ամեն մի հայորդի: Հայրենիքի լույս պատկերը իրենց հոգում և նրա պայծառ ապագայի վառ հավատքով շերմացած, նրանք մղում են իրենց ազգային գոյապայքարը աշխարհի տարբեր մասերում: Մենք վստահ ենք, որ գեղեցիկ մի օր հայր պիտի վերադառնա ու ամբողջանա Մայր Հայրենիքում:

Եվ այս հավատքով ու բարի հույսով գոհարանության այս նվիրական պահին Եկեղեց, սիրելի հավատացյաներ, միասիրոտ և միահոգի վերառաքենք առ Աստված հինավորց, հոգեբուխ մի աղոթք «հրաշափառ Աստված և միջտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ վիրկությին Հայաստանեայց սկըզբնաւորեալ...» անսասան ու անվրդով պահիր հայրապետությունը և հանրապետությունը ազգին հայոց: Օրինիր, սիրո ու խաղաղության մեջ պահիր արևելյան, արևմտյան, հյուսիսային, հարավային կողմն աշխարհին և բնակչալ ժողովուրդս ի նոցա. այժմ և միջտ և հավիտյանս. ամեն: